ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«07» ապրիլ 2016թ. No 1016 – Ա

ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ՀՈԳԵԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԱՅԻՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐՈՎ ՏԱՌԱՊՈՂ ԱՆՁԱՆՑ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

(ԱՆ 22.01.2020թ. թիվ 207-Ա հրամանով կատարվել է փոփոխություն)

Հիմք ընդունելով «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի 318-Ն որոշման 4-րդ կետի «գ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի հուլիսի 24-ի թիվ 39-Ն և 2013 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 49-Ն հրամանները, շտապ բժշկական օգնության ծառայության միջոցով տեղափոխված հոգեկան և վարքային խանգարումներով տառապող անձանց հոգեբուժական հիվանդանոցային կազմակերպություններում ընդունման բնականոն ընթացքն ապահովելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Նուբարաշեն հոգեբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ս.Թորոսյանին, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Նորք հոգեբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գ.Սայադյանին, Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարարության «Ավան հոգեկան առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Հակոբյանին, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Սևանի հուգեբուժական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գ.Կարապետյանին, «Ակադեմիկոս Ա.Հայիրյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Լ.Հայիրյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ն.Վարդանյանին (համաձայնությամբ), «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գ.Քալանթարյանին (համաձայնությամբ), «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Վարդանյանին (համաձայնությամբ)՝

1) Ապահովել հոգեբուժական օգնության և սպասարկման տրամադրման նպատակով շտապ օգնության բրիգադների կողմից բերված հոգեկան և վարքային խանգարումներով տառապող անձանց «Հոգեբուժական օգնության մասին» օրենքով սահմանված կարգով հոսպիտալացումը՝ բացառելով հոսպիտալացման մերժումը տեխնիկական կամ կազմակերպական բնույթի պատճառներով,

2) հոսպիտալացումը կազմակերպել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 49-Ն հրամանով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության եվ սպասարկման շրջանակներում հոգեբուժական օգնության կազմակերպման չափորոշչի» 13-րդ կետով սահմանված կարգով,

3) ի նկատի ունենալ, որ հոգեբուժության և պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող օրենսդրության և դրանից բխող հրամանի պահանջների խախտումը առաջացնում է՝

ա. վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 47.1 հոդվածով նախատեսված՝ բժշկական օգնության և սպասարկման մասին պայմանագրի առկայության դեպքում բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրումը մերժելու հիմքով,

բ. պայմանագրային պատասխանատվություն՝ ՀՀ առողջապահության նախարարության և հոգեբուժական կազմակերպության միջև պետության կողմից

երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրման պայմանագրային պարտավորությունների խախտման հիմքով:

2. ***կեպը ուժը կորցրած է ճանաչվել***:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Վ.Պողոսյանին: